է, որ ամեն մէկը կարողանայ ցոյց տալ հասարակական գործիչների սխալները, սակայն չպէտք է նրանց վերագրել քրէական գործողութիւններ։ Մամուլի ազատութիւնը չի կարող այդքան հեռու գնալ, որովհետև հակառակ դէպքում նա կը լինէր խախտում ոչ պակաս նշանաւոր իրաւունքի, այն է անհատական պատուի անձեռնմխելիութեան։ Այդ իրաւունքը կարող է յարձակումների ենթարկուել միմիայն դատաստանի առաջ, ուր ամբաստանուողը ունի ամբաստանողի հետ պաշտպանութեան հաւասար միջոցներ։ Ուր սկսւում է անապացոյց պարսաւանքի ազատութիւն, այնտեղ վերջանում է մամուլի ազատութիւնը»։

Տ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՊՕՏԷՄԱՑԻՑ

(*Տենիսոնից*)

Երեկոյեան արտի միջով անց կենալիս՝
Հասունացած հասկերն էինք մենք հաւաքում
Մենք գժտուեցանք իրարու հետ,—ես և կինս—
Օ՛, գժտուեցանք, ինչու համար՝ չեմ իմանում,
Բայց և նորից համբուրուեցանք արտասուելով.
Որովհետև հասանք այնտեղ, ուր պառկում էր
Առջի տարուայ մեր կորցրած սիրուն մանկիկ։

*